




Ժողովրդասին շաբաթաթերթ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՍՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՋԱՐԾԱՅԻՐ ԲԱՀԱՆԱՅ ԿԵՋԻԻՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 13 ՆՈՅԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 33

“ՏԱՃԱՐ,”

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դրու
Գաւառաց համար տարեկան	40 »
Արսասահմանի համար տարեկան	10 ֆրանկ
Ձեռքի կը ծախուի պրակը	40 փարա

Բաժանորդագիրները կանխիկ են

«ՏԱՃԱՐ»-ի թէ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Ջարմայր Քահանայ Կեզիւրեան, Կ. Պոլիս, Պեփրաւ, Հայոց եկեղեցի

درسماعده بتکطاشده ارمنى کلیسایسنده (داجار) غزیه سی مدیری پاپاس زارماز

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ,
Չարմաքճըլար, Յակոբեան խան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Մ. Վրդ. Գալէմբարեան
2. Տ. Տիրայր Մ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Գալէմբարեան
5. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիստակէս Բնյ. Հիսարեան
7. Տ. Չարմայր Բնյ. Կէզիւրեան

ՎԱՐՁԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուրբառ Բնյ. Պալլաճեան
5. Տ. Պողոս Բնյ. Պէյազճեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդապետեան
7. Տ. Դէորդ Բնյ. Անանձեան
8. Տ. Դրիգոր Բնյ. Ճէլճեան

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

«Տ Ա Ճ Ա Ր» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱՆԻՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ.—Առաջն. Փոխանորդ Տ. Արսէն Բնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՍ.—Տ. Ռուբէն Բնյ. Գալիկեան
ԱՄԵՐԻԿԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Պողոս Վրդ. Գալիկեան
ԱՅԵԹԱՊ.—Տ. Դարեգին Բնյ. Պողարեան
ԱՅԻՕՆ ԳՐԱՆՆԻՍԱՐ.—Տ. Խաչատուր Ա. Բնյ. Տօնէլեան
ԲԱԲԵՐԻ.—Մ. Սանոսեան էֆ.
ԳԱՂԱՏԻԱ.—Առաջնորդ Տ. Բաբգէն Եպսկ. Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ.—Տ. Յարութիւն Բնյ. Սարգիսեան
ԵԴԵՍԻԱ.—Ք. Թիւրաքեան էֆ.
ԵՕՁՂԱՏ.—Առաջնորդ Տ. Խորէն Մ. Վրդ. Դիմաքսեան
ԵՐՁՆԿԱ.—Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ. Փէրտանճեան
ՁՄԻԻՆԻԱ.—Տ. Յարութիւն Բնյ. Տ. Սարգսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ.—Տ. Գալուստ Բնյ. Տ. Գալուստեան
ԽԱՐԲԵՐԻ.—Առաջն. Տեղապահ Տ. Գէորգ Մ. Վրդ. Անլանեան
ԿԱՐԻՆ.—Առաջնորդ Տ. Սմբատ Եպսկ. Սաւաթեան
ԿԻՐԱՍՈՆ.—Մարթոս էֆ. Թոքատլեան
ԿԻՒՄԻԻԼՃԻՆԷ.—Տ. Ներսէս Բնյ. Նշանեան
ՀԱԼԷՊ.—Առաջն. Տեղապահ Տ. Շահէ Վրդ. Գասպարեան
ՄԱՆՁԷՍԹԸՐ.—Առաջնորդ Տ. Գէորգ Ս. Եպսկ. Իւթիւճեան
ՄԱՐԱՇ.—Տ. Հմայեակ Բնյ. Վարժապետեան

ՄԱՐՁՈՒԱՆ.—Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ.—Տ. Ոսկի Բնյ. Պիպիեան
ՆՈՐ ՋՈՒՂԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բաբարատ Վրդ. Վարդապետեան
Շ. ԳՐԱՆՆԻՍԱՐ.—Տ. Նախան Բնյ. Տառեան
ՈՒՇԱՔ.—Կարապետ էֆ. Քէհեանեան
ՊԱՆՏՐՄԱ.—ՊԱԼԼԻՔԻՍԻՐ.—Առաջնորդ Տ. Կարապետ Եպսկ. Մազլումեան
ՊԱՂՏԱՏ.—Առաջնորդ Տ. Մովսէս Ս. Եպսկ. Կէօմրիւքճեան
ՊԱՅՐԱ.—Կարապետ էֆ. Քէրթմէնեան
ՊԱՐՏԻՋԱԿ.—Յովհաննէս էֆ. Տ. Կարապետեան
ՊՐՈՒՍԱ.—Առաջնորդ Տ. Յովհաննէս Ս. Եպսկ. Արշարունի
ՌՈՒՍՃՈՒՔ.—Տ. Մկրտիչ Բնյ. Մըրջնիկեան
ՌՈՏՏԱՍԹՈ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բարթոլ Ա. Բնյ. Թագմեան
ՍՍՄՍՕՆ.—Առաջնորդ Տ. Սահակ Մ. Վ. Օտապալեան
ՍԵԲԱՍՏԻԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Թէոփիլէ Բնյ. Օտապալեան
ՍԵԼԱՆԻԿ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Կարապետ Բնյ. Թուխմանեան
ՍՕՅԻԱ.—Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մեսրոպեան
ՏԱՐՏԱՆԷԼ.—Տ. Դիոնեսիոս Բնյ. Տրէզեան
ՏԷՏԷ—ԱՂԱՃ.—Տ. Դարեգին Բնյ. Տէօփիլեան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ.—Դաւիթ էֆ. Մովսէսեան
ՏԻՄԷԹՕԳԱ.—Տ. Գէորգ Բնյ. Թէրզեան
ՏՓՂԻՍ.—Հ. Առաքելեան
ՓԱՐԻՁ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Վառժապետ Բնյ. Բիպարեան
ՔՂԻ.—Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՅԻԼԻՊԷ.—Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
ՅՐԷՋՆՕ.—Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 13 ՆՈՅԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 33

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—ԽՄԲԱԳՐԱԿԱՆ, եկեղեցականութիւնը կը քնանա՞յ, ԶԱՐՄԱՅՐ ՔԱ-
ՀԱՆԱՅ.—Գիտութիւն եւ հաւատք, (Թարգմ.) ՍՈՒՐԷՆ Վ. ԳԱԼԷՄԵԱՆ.—Աշխարհադպրակ գրագէտ
Կոնստանտին Թոլստոյի մահը, ԽՄԲ.—ԳՐԱ.ԽՕՍԱԿԱՆ, «Կրօնի դասեր» Մուշեղ եպս.ի, ՀՄԱՅՆԱԿ
ՔԶ. ԷՔԱԵՐՃԵԱՆ.—Եկեղեցականութեան բարձրացումը, ԿՐՕՆ. ԺՈՂՈՎ ԹՕԳԱՏԻ.—Անհրաժեշտը, ՅՐ.
ՔԶՆՅ. ԵՍԱՅԵԱՆ.—ԱԶԳԱՅԻՆ ԿՆՍԱՆՔԸ, Շաբթուան լուրեր:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՔՆԱՆԱՅ

Հինգ վեց ամիս է, յորմէ հետէ
լրջօրէն կը յուզուի եկեղեցական բա-
րեկարգութեանց հարցը, առիթ դառ-
նալով մէջտեղ դնելու այնպիսի ա-
ռաջարկներ՝ դաւանաբանական խնդ-
րոց շուրջ՝ որոնք երբեք այսպանելի
չըլլալով հանդերձ, —քանի որ առա-
ջարկողները բացարձակապէս եկեղեց-
ւոյ օգուտը ունեցած են աչքի առ-
ջև— ճշմարիտ յուզում եւ մինչև աս-
տիճան մը գայթակղութիւն առաջ
բերին բարեպաշտ շրջանակներու մէջ:

Իրաւ է որ լրագրական հրատա-
րակութիւնները իրենց օգուտը կ'ու-

նենան միշտ՝ միտքերու լուսաբանու-
թեան տեսակէտով, եւ միւս կողմէ
եկեղց. բարեկարգութեանց նման էա-
կան հարց մը մէկ օրէն միւսը կար-
գադրուելիք խնդիր մը չէ, եւ հան-
դարտ մտքով կատարուած ուսումնա-
սիրութիւններ եւ լուրջ խորհրդածու-
թիւններ անհրաժեշտ են:

Ու թէև սկզբամբ վարդապետա-
կան-դաւանաբանական կէտերու մէջ
ոեւէ փոփոխութիւն կատարելու փութ-
կոտութիւնը ապաժամ ըլլայ եւ ներ-
կայ պայմաններու մէջ ֆուսակար
խիւ, ու թէև Պոլսոյ մէջ եկեղց. բա-
րեկարգութեանց վրայ խորհրդակցե-
լու համար Համագումար ժողովի մը ի
նիստ հրաւիրուելու հաւանականու-
թեան մասին մեր հաւատքը կընուա-
զի տակաւ, բայց յուսանք թէ այդ

խնդրոյն վրայ գրուածները չպիտի մնան բոլորովին ապարդիւն, և բարեկարգութեան ամենէն էականը՝ եկեղեցականութեան բարձրացման հարցը՝ պիտի կրնայ աւելի գործնական քայլ մը առնել դէպ ի բանաւոր լուծում մը:

Ուրախ ենք տեսնելով որ այս ուղղութեամբ մեր պարզած տեսութիւնները համակիր արձագանգ մը կը գտնեն զանազան կողմերէ: Գաւառի և արտասահմանի ամենէն հեռավոր անկիւններէն հասած գրութիւններ կը բերեն մեզի այդ նպատակով եղած առաջարկներ, իբրեւ հիմնական և առաջին պայման եկեղեցական բարեփոխմանց: Ատոնցմէ երկուքը՝ Եւգոկիոյ Կրօն. ժողովին և Հալէպի բանիմաց քահանայի մը կողմէ գրուած՝ զորս կը հրատարակենք քիչ մը անդին, արժանի են ընթերցողներու ուշադրութեան: Ասկէ առաջ կարդացուեցան Գահիրէէն Արժ. Տ. Յարութիւն քհ. Սարգսեանի և Ամերիկայէն Գեր. Տ. Պօղոս վարդ. Գաֆթանեանի գրութիւններն ալ, որոնց հիմն ու առանցքը կը կազմէր ամենէն առաջ եկեղեցականութեան բարձրացման ստիպողականութիւնը: Ուրիշ քահանայ մը՝ Ներսէս քհ. Յարութիւնեան՝ Եարբուղէն (Կիլիկիա), միեւնոյն պէտքը կը չեչտէ, ախուր պատկեր մը գծելով կիլիկեան գաւառներու՝ (Էլպիստան, Կոկիսոն, Կապան, Փռնուզ, Հաճըն, ևն.) քահանաներու նիւթական և մանաւանդ իմացական խղճալի վիճակին վրայ, որով չեն կրնար շինիչ ազդեցութիւն մը ունենալ ժողովրդեան սիրտին ու հոգիին վրայ, և այն տպաւորութիւնն յառաջ բերած են թէ «եկեղեցին ռամիկներու ժողովա-

րանն է և հոն չեն երթար լուսամիտներ»: Ու բարեմիտ Տէր հայրը կը հարցնէ. — «Եկեղեցին ի՞նչպէս կըրնայ ըլլալ սիրուած, պաշտելի աղօթարան մը, երբ ան իր ծոցին մէջ անուցանէ նախապաշարեալ, ձախիկ և տգէտ կղերներ»: Ու կ'եզրակացնէ թէ եկեղեցիի ծիսակատարութեանց մէջ որքան ալ բարեկարգութիւններ մտնեն, կրկնումներ կամ յետսամուտ աւելորդաբանութիւններ ջնջուին, կրօնատումներ ըլլան, և եկեղեցին դուրս մեր երանաշնորհ նախնեաց օրերու աւետարանական պարզութեան մէջ, դարձեալ պիտի մնայ նոյն անշքութեան մէջ, եթէ կղերականաց համար բարեկարգութեան ճամբայ մը չրացուի, եթէ ամէն բանէ առաջ անոնք չզտուին բարեկարգութեան քուրային մէջ:

Գրեթէ նոյնիմաստ յայտարարութիւններ կ'ընէ Մարաշի Կրօն. ժողովը (*), շնորհաւորելով եկեղեցական բարեկարգութեանց նախաձեռնարկները. բայց «եկեղեցին կարգ մը յետսամուտ արարողութիւններէ և անօգուտ ծիսակատարութիւններէ մաքրողործելով» հանդերձ, «զայն պարտաճանաչ, նկարագրով և մտքով զարգացած եկեղեցականներու յանձնելը» անհրաժեշտ նկատէ ժողովրդեան հոգեւոր շինութեան համար:

Այդպիսի զորգացեալ ու պարտաճանաչ հոգեւորականութիւն մը — մասնաւորապէս քահանայութիւն մը — յառաջ բերելու համար, միջոցներ ցուցուեցան ու կը ցուցուին մեզի

(*) Ստորագրած են նախագահ Տ. Սահակ քհ. Տէր Պետրոսեան, Ատենապետ Տ. Վարդան քհ. Մինասեան եւ Ատենադպիր Տ. Հմայեակ քհ. Վարժապետեան:

զրկուած զանազան առաջարկներուն մէջ. ատոնց գլխաւորներն են զո՛նէ այսուհետեւ սաստիկ խստապահանջ ըլլալ ընծայացուններու ընտրութեան ատեն, քահանայից նիւթականը ապահովել, ընծայարաններ բանալ : Անշուշտ ատոնց գործադրումը պիտի ունենայ իր մեծ օգտակարութիւնը : Բայց պիտի գործադրուի՞ն թէ մեռեալ տառ պիտի մնան այսուհետեւ ալ, ինչպէս մնացեր են մինչև հիմայ : Եւ եթէ գործադրուին իսկ, անմիջական ներկային համար ունի՞ն պզտիկ օգուտ մը : Ուէ՛ պարտականութիւն չի՞ ծանրանար այժմ պաշտօնավարող հայ հոգեւորականութեան վրայ :

Այս հարցումները ուղղելու պահուն, սրտի սեղմումով կը յիշեմ ութտասն ամիսներ առաջ, Տաճարի 5րդ և 8րդ թիւերուն մէջ, այս նիւթին վրայ հնատարակած գրութիւններս : Ծշմարիտ տխրութիւն մը կը պատէ հոգիս, տեսնելով ահաւոր անտարբերութիւնը որով համակուած է հայ հոգեւորականութիւնը՝ զրեթէ իր ամբողջութեան մէջ : Անտարբերութիւն՝ ժողովուրդին հոգեւոր շինութեան գործին մէջ, անտարբերութիւն՝ անոր ցաւերու ամոքման մէջ, անոր հոգիի վրդովումներուն փարատման մէջ, անտարբերութիւն՝ իրենց իմացական զարգացման գործին համար, իրենց բարոյական դիրքի բարձրացման համար, անտարբերութիւն՝ նոյն իսկ իրենց նիւթական վիճակի բարելաւութեան, իրենց ապագայի ապահովութեան համար :

Իսկոտ սակաւաթիւ մէկ քանի եռանդոտներ կը խօսին, կը զրեն անհրաժեշտ վերակազմութեանը վրայ հայ կղերին՝ յաջողապէս պայքարելու

համար հակակրօն ոգիին ծաւալման դէմ, գաւառներու և մասնաւորապէս կիլիկեան քաղաքներու մէջ տարածուած օտարադաւան մարդորսներու մեքենայութեանց դէմ, բայց եկեղեցականութեան — ամուրի թէ ամուսնացեալ — ստուար զանգուածը կը մնայ դիականացած իր մեռելային անշարժութեան մէջ :

Եւ ի՞նչ որ աւելի սարսափելի է, կը գտնուի մաս մը, — թէև բարեբախտաբար փոքրաթիւ — որ կը հեգնէ, կը ծաղրէ՝ ժողովրդին ցաւերովը տառապող, կղերին բարձրացման տենչովը միացող սակաւաթիւ անձերու սրտի կոտտանքը :

Անցեալ Մարտ 15ին կը գրէինք. —

«Թուրքիոյ ազատագրութեան գեղեցիկ չըջանին մէջ, միակ դասակարգը որ օգուտ չքաղեց այդ ազատագրութեան ընծայած բազմադիմի առաւելութիւններէն, հոգեւորականութիւնն եղած է, որ տակաւին չկազմեց ընդհ. եկեղ. Միութիւն մը, հիմնական նպատակ ունենալով փնտռել լաւագոյն միջոց մը ժողովրդեան կրօնական մարած եռանդն արծարծելու, և այդ նպատակին յարակից ուրիշ նպատակ մը, այն է եկեղեցականաց իմացական մակարդակին՝ նաև նիւթական վիճակին՝ բարելաւումը» :

Աւելի առաջ, Յունվ. 15ին հրատարակուած գրութեան մը մէջ կը պարզէինք փայլուն վիճակը նոր Նախիջեւանի մէջ կազմուած քահանայական միութեան մը, որուն նպատակն է օգնել կարօտ քահանաներու, այրիացեալ երիցունիներու և անոնց որբերուն, ևն :

Այդ յօդուածներու հրատարակութեան միջոցին շնորհաւորութիւններ ստացանք եկեղեցական թէ աշխարհական բազմաթիւ համակիրներէ. բայց մեր նպատակն այդ չէր : Մեր

սրտագին բաղձանքն էր տեսնել նա-
խաձեռնութեան ոգիի տէր մէկը, որ
գլուխ կանգնէր կազմելու այդպիսի
միութիւն մը, որ ուժ տար եկեղեցա-
կանութեան, բարձրացնէր զայն իր
ինկած վիճակէն, դնէր զայն իր պար-
տականութեան գիտակցութեան բարձ-
րութեանը վրայ (*):

Ահա՛ զոր իրերը նոյն մնացին,
եթէ չեղան վատթար: Եկեղեցիի և
եկեղեցականութեան հակառակորդ-
ները կը գործեն հիանալի յարատե-
ւութեամբ մը և օրինակելի կազմա-
կերպութեամբ մը, պատրաստելով
կազմալուծումը, կործանումը այն դա-
րաւոր Հաստատութեան, որ հիմը,
կամ գոնէ ամենահզօր ազդակն եղած
է Հայ ցեղին գոյութեան, իբր ինք-
նուրոյն ժողովուրդ մը՝ Արեւելքի բազ-
մազգի, բազմացեղ ժողովուրդներու
եռուզեւին մէջ:

Ու եկեղեցականութիւնը կը քը-
նանա՛յ, չի կազմակերպուիր, չի գոր-
ծեր միասիրտ ոգիով մը, քրիստո-
նէական համերաշխութեամբ մը, ա-

ւետարանական սիրով մը: Եթէ չըլ-
լար աշխարհական բարեպաշտ տարրի
հոծ զանգուածը, — որ բարեբախ-
տաբար տակաւին ստուար մեծա-
մասնութիւնը կը կազմէ ժողովուր-
դին, — կը վախճամ որ հայ հոգեւո-
րականութիւնը՝ իր դատապարտելի
անհասկողութեան և անհանդուրժելի
թմբիրին մէջ՝ չպիտի նշմարէր իսկ
կործանումը այն բարոյական փառա-
յեղ շէնքին, որ Հայաստանեայց Առա-
քելական Ս. Եկեղեցին կը կազմէ:

Եւ իր սթափումը ահաւոր պիտի
ըլլար՝ կործանած հսկայ շէնքի մը
տխուր աւերակներուն վրայ:

Բայց ժողովուրդը, հաւատաւոր,
իր նախնիքներու նուիրական աւանդ-
ներուն պինդ փարով ժողովուրդը
կայ և պիտի մնայ միշտ. անիկայ յա-
ւետ կանգուն պիտի պահէ իր դի-
ցազն նախնիքներու արիւնովը չաղախ-
ուած նուիրական հաստատութիւնը,
զո՛ւրս վտարելով անոր պաշտօնեա-
ներուն մէջէն բոլոր շահամոլները,
պորտաբոյծները, կեղծաւորները, ան-
տարբերները:

ՋՈՐՄԱՅՐ ՔԱՀԱՆՍՅ

(*) Յառաչիկայ շարքու, երբ Ազգ. ժողովը
իր անվերջանալի վիճաբանութիւններուն ելք մը
սայ եւ որոշուի Վարչական ժողովներու վերա-
կազմութիւնը, ապահովաբար Պոչոյ եկեղեցա-
կանները Համագումար ժողովի պիտի հրաւիրուին՝
Կրօն. ժողովոյ անդամոց եռասպիկ ցանկը պատ-
րաստելու համար: Վստահաբար կ'ըսենք թէ այդ
միջոցին կարծիքի ուռի փոխանակութիւն իսկ
չպիտի ըլլայ գէթ Պոչոսիայի ֆահանայութեան վի-
ճակի բարձրացման նպատակով երկու տարի առաջ
ծրագրուած միաբանութեան գործակալացնելու հա-
մար: Կրնանք գրաւ դնել առտ, հարիւրին հա-
րիւր շահելու հաւանականութեամբ: Մեր պատ-
ուական հայրերն եւ եղբայրներն ի Քրիստոս ամեն
բան Ազգ. իշխանութիւնէն կ'ապաստեն, իրենց զար-
գացման, իրենց օգուտին համար իսկ ճիգ մը,
շանկ մ'ընելու սովորութիւնը կը պակսի մեզի:
Հանրածանօթ առածը՝ Դուռն քեզ օգնէ, Աստ-
ուած ալ քեզ կ'օգնէ, մեզի՝ հայ հոգեւորական-
ներու համար ըսուած չէ կարծես:

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՒԱՏՔ

«Զամենայն ինչ փորձեցի,
գրարիւն ընկալաւուս»
(Ա. Թեաղ. Ե. 21)

Այսօր շատ մը զանգակներու ձայներ
կը հնչեն մարդկութեան ականջին. բայց ես
կը ցաւիմ այն մարդուն վրայ, որ ստիպ-
ուած է միաժամանակ լսել երկու իրարու
ներհակ ձայն ունեցող զանգակներ, տառնց
գիտնալու թէ այդ երկու ձայներէն ո՞րը
աւելի ճիշդ է եւ ո՞ր կողմը պէտք է ուղղէ
ինքզինքը:

Ահա՛ սակայն այն կացութիւնը, որուն
ենթարկուած է այսօր անկեղծ եւ ամէն
չինիչ ակերու կարեւորութիւն ընծայող

մարդը՝ իր հոգւոյն խաղաղութեան եւ ճշմարտութեան հասնելու համար։ Մէկ կողմէ՝ ձայներ կը լսէ, որոնք կ'ըսեն իրեն. «Գիտութիւնը միայն ճշմարտութեան կ'առաջնորդէ»։ Միւս կողմէ՝ ոչ նուազ արդու կերպով կրճայնեն իրեն. «Ձգուշացիր, գիտութիւնը կը խոտաւանայ բայց չի կատարեր, ճշմարտութիւնը հաւատքին մէջ փնտռուէ»։ Ուրիշներ կը կրկնեն. «Շօշափէ, տես, չափէ, կշռէ և ընդունէ այն ինչ որ գիտականօրէն կ'ապացուցուի»։ Այլք սա լեզուն կը գործածեն. «Հրաժարէ գիտութենէն, մի՛ տատամսիր, մարդ հոն կը կորսնցնէ սրտի խաղաղութիւնը, առանց մտքի գոհունակութիւն գտնելու։ Յայտնուած ճշմարտութիւն մը կայ, այն ալ հաւատքն է, որ գոհացուցած է նոյն իսկ քու հայրերդ...»։

Գիտութեան այլամերժ ախոյեանները կ'արհամարհեն հաւատքը՝ իբրեւ աւելորդապաշտ տկարութիւն մը, որ անարժան է սոսնական հոգիներու։ Հաւատքի այլամերժ ախոյեանները՝ ունայն, մեծամիտ և երբեմն ամբարշտ ձեռնարկ կը կոչեն գիտութիւնը։ Ահաւասիկ իրարու հակառակ երկու դրութիւններ զորս պէտք է քննել, գիտնալու համար թէ ո՞րն է ճշմարիտը։ Ամէն կատարեալ եւ իր բնութեան ցուցումներուն հետեւող անհատ՝ անկարելի է որ անտարբեր մնայ այս երկու հակառակ ձգտումներուն հիմնական օրինաւորութեան եւ հրապոյրներուն հանդէպ։ Անիկա կը սիրէ միացնել այդ երկու ձգտումները, ոչ թէ փակելով իւրաքանչիւրը իր ներքին կեանքին մէջ, եւ ըստ ժամու հետեւելով միոյն կամ միւսին, այլ ընդհակառակն միացնելով անոնց ջանքերը, իր աշխատութիւնը աւելի լաւ կերպով կատարելու համար։ Այս պիտի ըլլայ մեր ջանքը, ու պիտի տեսնենք որ գիտութեան և հաւատքի աշխարհներուն մէջ նուազ հակառակութիւն եւ կարծուածէն աւելի միացման կապեր կը գտնուին։

* *

Մարդուս մէջ, նոյն իսկ գիտակից կեանքէն առաջ, բուռն հետաքրքրութիւն մը կը ծնի։ Դիտեցէք մանուկը։ Անիկա

շարունակ գործունեայ փորձարկու մըն է, կը դիտէ, կը շօշափէ և կը համտեսէ անդադար։ Այդ բնածին եռանդը ջնջել, կանոնաւոր զարգացումը խոչընդոտել, բարիին եւ նոյն իսկ կամքի դիմադրել կը նշանակէ։ Ուրեմն այդ եռանդը աւելի քաջալերուելու պէտք ունի եւ ժամանակին հետ կ'ըլլայ այն, ինչ որ կը կոչենք ճաննալու պապակ, որ է լաւագոյն անհատներու աղնիւ չարչարանքը։ Գիտութիւնը այդ պէտքէն եւ այդ գործունէութենէն ծնած է։ Փորձենք ուրեմն սահմանելու համար անոր դերը եւ տեղը։

Գիտութիւնը դիւրիմաց երեւոյթներու եւ իրողութիւններու մեթոտաւոր բացատրութեան եւ դասաւորումին մէջ կը կայանայ։ Դասաւորումը անհունապէս աւելի դժուար է ու ընդարձակ, քան բացատրելը։ Այն բազմաթիւ իրողութիւնները, որոնք մինչեւ ցարդ անվերլուծանելի մնացած էին, ոչ նուազ գիտութեան գիտնին կը պատկանին։ Անիկա կը դասակարգէ և նոյն իսկ կը շահագործէ զանոնք, առանց հասկընալու։ Անիկա շատ բնական է։ Գիտութեան աշխատութեան դաշտին մէջ տակաւին անխոյզ մնացած հողեր կան, որոնք ապագայ հետազոտութիւններու առարկայ պիտի ըլլան։ Ոչ ոք տակաւին մուտ գործած է հոն։ Մենք կրնանք ընդունիլ թէ տակաւին շատ մը անծանօթ մնացած գետիններ կան եւ որոնց գոյութեան մասին չենք կրնար տարակուսիլ։ Եւ ճանչցուած հողերու վրայ գտնուած ճամբաներուն քով տակաւին շատ մը անծանօթ անկիւններ կը գտնուին, ուր կասկածը կը տիրապետէ և ուր հարցական նշանը կը ցցուի։ Սակայն հակառակ այս ամենուն, գիտութեան հետախուզած գետինը ուշագրաւ է։

Գիտութեան հետախուզութիւններն ու աշխատութիւնները մարդկային այնքան սահմանաւոր ոյժերուն հետ բաղդատելով, կրնանք ըսել թէ առաջինները հսկայ համեմատութիւններ առած են։ Մարդկային կեանքի նիւթական շրջանակին մէջ զրտնուած ամեն ինչ կերպարանափոխուած է։ Խորհելու պայմանները մեծ փոփոխումներու ենթարկուած են, մենք հիներէն

տարբեր մեծութեամբ մը կը գործենք այժմ. մեր հայրերուն աշխարհը մերը չէ այլեւս:

Գիտութեան յաղթանակներէն իւրաքանչիւրը, որոնց ամբողջութիւնը ամենամեծ պատիւն է մարդկութեան, երկար եւ համբերատար հետախուզութիւններու պտուղը եղած եւ երբեմն ալ արիւն տրած են: Շնորհիւ այնքան անձնութիւններու եւ զոհողութիւններու, որոնց հեղինակները շատ քիչ վայելած են, մենք այնպիսի առաւելութիւններ ունինք այսօր, զորս կարելի չէ թուել առանց յուզումի եւ առանց երախտագիտութեան: Այն հրաշտի արդիւնքները, որոնք պսակած են գիտութեան ջանքերը, արեւելեական հիացումը մը արժանացուցած են զայն: Գիտութիւնն աղարտողներն իսկ, ակամայ թանկագին պատիւներ կ'ընծայեն անոր: Գէշ կը խօսին անոր վրայ, բայց միեւնոյն տտեն կ'օգտուին անոր բարիքներէն:

Ահա ընդհանուր իրողութիւն մը, ուրկէ կարելի չէ բան մը ջնջել: Եւ սակայն գիտութեան փառաւոր կացութիւնը կ'արդարացնէ իր ակոյեաններուն այն յաւակնութիւնը, երբ գիտութիւնը իրեւ միակ օրէնք եւ ստուգութեան միակ աղբիւր կը նկատեն: Ծշմարտութիւնը ճանչնալու համար գիտական փորձէն զատ ուրիշ որ եւ է միջոց չկայ մեր մէջ, կամ աւելի ճիշդը ըսելու համար՝ իմացականութիւնն է այն միակ մուտքը, ուրկէ մինչեւ մեզ կը թափանցէ իրականութիւնը: Ենթադրենք որ մարդը կը ճանչնայ ամէն ինչ. բայց իր ճանչցածով, գիտցածով կրնայ ապրիլ: Աստիք հարցեր են, որոնք հարկադրելի կ'ընեն ինքզինքնին:

Գիտութեան՝ ո՛չ թէ մէթոտները, այլ մեզի տուած արդիւնքները քննելով, պիտի տեսնենք որ անոնք ամենքն ալ միեւնոյն դասակարգին կը պատկանին: Անոնք թուաբանական կամ մեքենական կալուածին կը վերաբերին. եւ ինչ որ այդ շրջանակէն դուրս կը մնայ, անբացատրելի է այլ եւս: Գիտութիւնը կրնայ այդ անբացատրելին հաստատել, դասակարգել, գործածել իսկ, բայց չի կրնար հասկնալ ու հասկնալի ընել:

Արդ, մեքենական ու թուաբանական

գիտութիւնը իրերու ձեւը միայն կրնայ գիտնալ եւ ոչ թէ հիմը: Նոյն իսկ այն եւրեւոյթներուն մէջ զորս գիտութիւնը բաակամ կը վերլուծէ եւ կ'արտադրէ, չի կրնար որոշ գաղափար մը տալ ոչ նիւթին եւ ոչ ալ ուժին վրայ: Նիւթը եւ ոյժը որ ամենէն աւելի աչքառու են եւ չօգտօնի, տակաւին բնազանցական կալուածին կը վերաբերին: Երբ ինքզինքնիս ուժականութեան (dynamique) ազդեցութեան ենթարկենք, ուսմիկին համար ամենապարզ երեւցած բաները, ինչպէս լոյսը, տաքութիւնը, գիտական անծանօթներ կը դառնան: Այսպէս հետզհետէ կը համոզուինք թէ ոչինչ գիտենք մինք, եւ թէ մահկանացուներու համար առեղծուած է ամէն ինչ: Այժմ աստիճանաբար յառաջանալով բարձրանանք կեանքի սեմին: Ո՛ր է այն կամուրջը, որ անգործարան բնութիւնը գործարանաւոր բնութեան կը կապէ: Կայ այնքան պարզ օրինակ մը, որ զօրաւոր միջոցներով ցոյց տայ մեզի թէ ի՞նչպէս կը ծնի բջիջ մը եւ ինչո՞ւ: Հոս գիտունները կը խոստովանին իրենց չգիտութիւնը: Է՛ն աննշան բոյսերուն կեանքն իսկ անհասանելի բարձրութեան մը վրայ կը գտնուի տակաւին: Եւ սակայն այդ մեծ անծանօթը կը գտնուի բոլոր բնական գիտութիւններու խորը, բուսային բնախօսութենէն սկսեալ մինչեւ մարդուն բնախօսութիւնը:

Արդ, խոր գիշերուան մէջ, մթութիւնները կը թանձրանան ցորչափ երեւոյթները բարդաւորութիւն, եւ տարորոշութիւն գործարաններն ու պաշտօնները: Ահա կ'երեւի կենդանական կեանքը եւ անոր ջղային դրութիւնը, դիւրագրգռութիւնը, զգայականութիւնը եւալն: Ի՞նչ է բուսական բջիջը, գաղտնիք: Բայց ի՞նչ է ջղային բջիջը, աւելի մեծ գաղտնիք...

Սակայն այս ամենը կենդանական կեանքին աննշան սկզբնաւորութիւններէն անդին չեն տանիր զմեզ: Այդ աննշան սկզբնաւորութիւններէն յետոյ կուգայ ուղեղը, ոչ թէ տակաւին մարդուն, այլ որ եւ է չորքոտանի մը: Բայց այդ մթութիւնները բաղդատմամբ մարդոց կեանքը քննուած ժամանակ յառաջ եկած մթութեան

թիւններուն, միջօրէի ջինջ լոյսերու կը նըմանին: Մենք գիտենք թէ ի՞նչ նիւթեր կը դտնուին արեւին կամ չնիկ աստղին մէջ, բայց մեր դիտական միջոցները չեն ներեր քննելու համար ուղեղին կատարած գործողութիւնը: Արդի գիտութեան ամէնէն աւելի կատարելագործուած գործիքներով երբ նիւթական մարդը քննենք, չենք կրնար երեւան հանել կամ գիտնալ՝ անոր խորհուրդ մը, յուզում մը եւ ոչ ալ զգայութիւն մը ունենալը: Այ՛ր կը տեսնենք: Ահա իրողութիւն մը զոր գիտութիւնը չի կրնար հաստատել: Մենք գիտենք զայն ուղղակի եւ ներքին զօրութեամբ, ինչպէս որ գիտենք թէ գոյ ենք, բայց գիտութիւնը գործիքներ չէ հայթայթած հասկնալու համար զայն: Շատեր այնպէս կ'երեւակայեն թէ ուղեղային աշխարհագրութեամբ, ներագանկի (encéphale) մանրամասն մանրագրութեամբ, եւ մանրակրկիտ լուսագրութեամբ զբաղող անհատներ ծանօթ են այդ բաններուն, ինչպէս ժամագործը ժամացոյցին: Բայց տղայական ենթագրութիւն է այս:

Ենթադրենք որ արդի գիտութեան բոլոր յառաջդիմութիւններուն տեղեակ եւ յունարէնի վրայ բնաւ գաղափար չունեցող անձեր Հոմերոս մը գտնեն եւ ըսեն իրարու. — Տեսնենք ի՞նչ կայ սա հատորին մէջ: Եւ ահա կը հաշուեն տառերը, կը չափեն, կը բաղդատեն, եւ յետոյ ընտփոտական եւ քիմիական ձեռնավարութեան կ'ենթարկեն զանոնք: Այս աշխատութիւնէն վերջ ի՞նչ պիտի գիտնան Հոմերոսի վրայ. գիրքին գոյնը, ձեւը, տառերուն զուգադրութիւնը, թուղթին եւ մելանին քաղաղութիւնը ու թանձրութիւնը, կէտերուն, տողերուն, էջերուն թիւը եւ վերջապէս կրնան տակաւին շատ մը բաներ գիտնալ, բայց դարձեալ բան մը չպիտի կրնան գիտնալ Հոմերոսի վրայ:

(Թարգմ. Գաղղ.է.)
ՍՈՒԻԵՆ ՎԱՐԴ. ԳԱԼԵՄԵԱՆ

Սկիզբատ.

ԱՇԽԱՐՀԱՇՈՉԱԿ ԳՐԱԳԷՏ ԿՈՄՍ ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅԻ ՄԱՀՐ

— 0 —

Ռուս աշխարհահռչակ գրագէտը, վիպագիր, ընկերաբան, փիլիսոփայ եւ գերազանցապէս մարդասէր միտքը, Կոմս Լէոն Թոլստոյ, մարդկային միտքի տարեգրութեանց մէջ դարերու ընթացքին հազուադէպ կերպով երեւցող աշխարհահռչակ համբաւ մը, չիջաւ անցեալ կիրակի, չաղատելով սրտի եւ թոքի տկարութենէն, որուն ենթարկուած էր յանկարծակի ցրտառութեամբ, մինչ կը փախչէր Եամսայա Բօլեանայի իր բնակարանէն, իր ընտանեկան բոյնէն: Հակառակ իր ճշմարիտ ազնուականի ծագումին, մէկդի թողած իր կոմսի տիտղոսն եւ առանձնաշնորհները, եւ իր հարըստութիւնը՝ յօգուտ չքաւոր մուժիկին, կ'ապրէր անոնց մօտ, անոնց հետ, շինականի տարրական հագուստն հագած: Բայց գեղջուկի այդ պարզ կեանքն անգամ փարթամ գալով իրեն, իր վարդապետութեան ալ աւելի հաւատարիմ մնալու համար, վերջերս դիմեց աշխարհաւորացութեան, թողուց իր տունն եւ ընտանիքը, եւ չնայելով իր ութսնամեայ վիճակին, հեռացաւ ընտանեկան Բոյնէն, վանք մը քաշուելու, մեկուսանալու, կամ Տուխօպօր աղանդաւորներուն մէջ անցընելու համար կեանքին մնացեալ մասը:

Ռուս գրականութեան մեծագոյն փառքն է Թոլստոյ. իր վէպերուն հիմը կը կազմեն ռուս ընկերային կեանքի խեղճութիւնները, ռուս շինականին տգիտութիւնը, թշուառութիւնը եւ ատոր հետեւանքն եղող անբարոյութիւնը, կալուածատիրութեան ջախջախիչ ուժը, ռուս Օրթօքսօքս կղերին հարըստարութիւնը խեղճ գիւղացիին դէմ, նաեւ բռնակալութեան ձեռքը խաղալիկ դարձած դատական մարմինը: Այս ամէնուն ի դարման Թոլստոյ կը քարոզէ զուտ աւետարանական վարդապետութիւնը, ընդհանուր ներդամտութիւն, ինչքերու հաւասարութիւն, աշխատութիւնը՝ իբր տիեզերական պարտաւորութիւն, ամէն դա-

սակարգի համար անխտիր, և երբե՛ք պատերազմ, արիւնհեղութիւն, բռնութիւն կամ զինուորական ծառայութիւն: Իր կրօնքն էր մարդկային ընդհանուր եղբայրակցութիւնը, աւետարանական գութն ու սէրը, մերկացած իր կրօնային անձուկ ձեւերէն ու ծէսերէն: Ռուս կղերը Եկեղեցւոյ հաղորդակցութենէ զրկեց զինքը, և շատոնց Սիպերիա աքսորուած պիտի ըլլար, եթէ Ռուս Արքունիքը չպատկառէր Թուրքոյի աննման ու տիեզերական ժողովրդականութիւնէն:

Ճշմարիտ յեղափոխական մը եղած է Թուրքոյ իր վարդապետութիւններով, առանց բնաւ ընդունելու ու է բռնուն միջոց իր գաղափարներու ծաւալումին համար. անվերապա կերպով կը դատապարտէր ամէն արիւնհեղութիւն, ի՛նչ չարժանիքով ալ ըլլայ:

Պրանսայի Ժ.Թ. դարու ամենահզօր միտքը Վիքդոր Իւկօ միայն կրնայ բաղդատուիլ Թուրքոյի հետ, իր մարդասիրական լայն գաղափարներով և վտելած տիեզերական անհուն ժողովրդականութեամբ:

* * Ռուսիոյ մէջ ընդհանուր սուգ յառաջ բերաւ Թուրքոյի մահը: Տուժան (Էնդհ. Ժողով) նիստը դադրեցուց ի նշան սգոյ, ցաւակցական հեռագիրներ ուղղուեցան կոմսուհիին, թատրոնները փակ մնացին՝ սուգի արտայայտութեան համար. բայց Ռուս Սինօդն որոշեց կրօն արարողութիւն կատարել չտալ, ոչ ալ հոգեհանգիստ, որովհետեւ հանգուցեալը հաշտուած չէր Ռուս Եկեղեցիին հետ: Թաղումը կատարուեցաւ ի Եսմնահա Բօլիանա՝ ընդհանուր սուգին մէջ վշտաբեկ քաղութեան մը, որ ծունկի եկած շարական կ'երգէր սքեմաւորներու տեղ:

Բեղերապուրկի Հայոց Եկեղեցիին մէջ միայն՝ հանգիստաւոր Պատարագ և Հոգեհանգիստ կատարուեցաւ մեծ գրագէտին համար: (*)

(*) Յառաջիկայ բնով՝ հոյակապ էջ մը աշխարհահռչակ գրողին:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

“ԿՐՕՆԻ ԴԱՍԵՐ,”

Բ.

Ի՛նչ որ Հայ Ս. Եկեղեցին դարերու ընթացքին մէջ իրրեւ ուղիղ և ճշմարիտ ընդունած է, մէկ գրչի հարուածով՝ յախուռն կերպով՝ նոր վարդապետութեան մենամուլութենէն բռնուած, չէ կարելի չըջել կամ ալլափոխել. պէտք է պատկառ մնալ Ս. Գրոց, Տիեզերական Ժողովոց և ուղիղ, անկաշկանդ դատողութեան: Ձեռք առնենք քննելի կէտերը:

1. Մուշեղ Եպիսկոպոս Հաւատամքին մէջ, էջ 14, կը սորվեցնէ այլապէս, ինչ որ Եկեղեցին ընդունած չէ. Հոգւոյն Սրբոյ համար կը գրէ. «Որ էջն ի Յորդանան, քարոզեաց յԱռաքեալսն և բնակեցաւ ի սուրբսն»:

Տգիտաց ոմանց կողմանէ այլ և այլ ձեռագրերու մէջ «գլուաքեալն» փոխուած է «գլուաքեալսն» ի կամ «յԱռաքեալսն» ի, մտածուելով թէ Հոգին Սուրբ ի վերնատուն յԱռաքեալսն հանգեաւ կամ քաջալերեց և մխիթարեց գլուաքեալսն. մինչդեռ Յորդանանու եզերքն Յիսուսի մկրտութեան պահուն Առաքեալները գործ չունէին, Հոգւոյն Սրբոյ շնորհքը ստացան ի վերնատան. Յիսուս վերնատան մէջ չէր որ մկրտուեցաւ: Այդ տարրեր ձեռագրերու օրինակէն թելադրուած՝ Մուշեղ Եպս. «յԱռաքեալսն» կը գրէ: Հոգին Սուրբ Յիսուսի աստուածութիւնն հաստատեց ի Յորդանան, քարոզեց զայն և ի սուրբսն բնակեցաւ ի վերնատուն, այսինքն յԱռաքեալս՝ զի Բրիստոնեայք կը կոչուին ի Ս. Գիրս սուրբ. «Ամենայն սրբոց որ ի Բրիստոս Յիսուս, որ են ի կոչմանս Փիլիպպեցւոց» (Փիլպ. Գ. 1): Հոգին Սուրբ չէր ի Յորդանան Յիսուսի վրայ արդէն գուշակած էր Եսայի (ԺԱ. 1-2) «Եւ բղիսեցէ գաւազան յարմատոյն Յեսեայ... և հանգիցէ ի վերայ նորա Հոգի Աստուծոյ»: «Յովհաննէս վկայեաց և ասէ թէ տեսա-

նէի զՀոգին զի իջանէր իրրեւ զաղաւնի յերկնից և հանգչէր ի վերայ նորա. և ես ոչ գիտէի զնա. այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով նա ասաց ցիս՝ յոյր վերայ տեսանիցես զՀոգին զի իջանիցէ և հանգչիցի ի վերայ նորա, նա է որ մկրտէ Հոգւոյն Սրբով, և ես տեսի և վկայեցի թէ սա է Որդին Աստուծոյ» (Յովհ. Ա. 32-34)։

2.—Էջ 15. «Բրիստոսի նկատմամբ որ մեզի ամենէն աւելի ծանօթն է, այսպէսով ծանօթէն անծանօթին, որոշէն անորոշին»։

Հաւատքի ճանաչողութեան առջև երրորդութեան մէջ անծանօթ անձ չկայ և ոչ անորոշ։ Պօղոս Արիսպագոսին առջև կ'ըսէր Աթենացւոց. «Գտի բազին մի յորում գրեալ էր՝ Անծանօթին Աստուծոյ, զոր զուգը յանձանօթս պաշտէք. ես զնոյն պատմեմ ձեզ»։ Գործք ԺԷ. 23։

Աթենացւոց այն անծանօթ Աստուծոյն է որ տիեզերքն ստեղծեց. արարիչ է ոչ միայն Հայր, այլ և Որդին և Ս. Հոգին. «Ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր»։ (Ծննդ. Ա. 1)։

«Ի սկզբանէ էր Բանն և Բանն էր առ Աստուած և Աստուած էր Բանն, նա էր ի սկզբանէ առ Աստուած, ամենայն ինչ նովաւ եղև»։ (Յովհ. Ա. 1.)

«Ոչ ոք ճանաչէ զՈրդի եթէ ոչ Հայր և ոչ զՀայր ոք ճանաչէ եթէ ոչ Որդի և ում Որդին կամիցի յայտնել»։ (Մատթ. ԺԱ. 27)։ «Այս են յաւիտեական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն Ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Բրիստոս։ (Յովհ. ԺԵ. 3)։ «Ամենեքեան պատուեսցեն զՈրդին որպէս պատուեն զՀայրն, որ ոչ պատուէ զՈրդին, ոչ պատուէ զՀայր զԱռաքիչն նորա»։ (Յովհ. Ե. 23)։ «Եթէ Հայր յիս և ես ի Հայր, ես և Հայր իմ մի եմք»։ (Յովհ. Ժ. 32)։

Շնորհալին առ Կիւ Մանուէլ գրած թղթոյն մէջ կ'ըսէ. «Զի թէ ամենայն որինչ Հօր է, Որդւոյ է, և որ ինչ Որդւոյ՝ Հօր»։

Մուշեղ Եպիսկոպոս կարծես թէ Փիլիպպոսի քով կեցած անոր հետ կը հարցնէ Յիսուսի. զքեզ գիտենք ու կը ճանչնանք, բայց ո՞ւր է Հայրը. «Յոյց մեզ զՀայր և շատ է մեզ»։ որովհետ ի պատասխան մեր

կողմէ ոչ մէկ բառ ունինք. Յիսուսի խօսքերը ամբողջութեամբ մէջ կը բերենք. «Այսպիսի ժամանակս ընդ ձեզ եմ և ոչ ծանեար զիս, Փիլիպպէ. որ ետեսն զիս, ետես զՀայր, և դու զիս՝ ասես եթէ ցոյց մեզ զՀայր, ոչ հաւատաս եթէ ես ի Հայր և Հայր յիս է. զբանս զոր ես խօսիմ ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ ինչ խօսիմ, այլ Հայրն որ յիս բնակեալ է, նա գործէ զգործան. հաւատայք ինձ, եթէ ես ի Հայր և Հայր յիս է. ապա թէ ոչ, գոնէ վասն գործոցն հաւատացէք ինձ... և բանն իմ, զոր լսէք, ոչ է իմ այլ Հօրն՝ որ առաքեացն զիս... որ զիս ատեսայ, և զՀայրն իմ ատեսայ։ Բայց յորժամ եկեսցէ մը խիթարիչն զոր ես առաքեցիք ձեզ ի Հօրէ՝ զՀոգին ճշմարտութեան, որ ի Հօրէ ելանէ, նա վկայեցէ վասն իմ, նա զիս փառաւորեցէ, զի յիմմէ անտի առնուցու՝ և պատմեսցէ ձեզ... զամենայն զոր ինչ ունի Հայր իմ է, վասն այսորիկ ասացի ձեզ թէ յիմմէ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ... Ես և Հայր առ նա եկեսցուք և օթեւանս առնմա արասցուք... և չեմ միայն, զի Հայր ընդ իս է... և որ ինչ իմ է ամենայն քո է, և որ ինչ քո է, այն իմ է, և փառաւորեալ եմ ի նոսա... զի եղիցին մի, որպէս և միք մի եմք... զի ամենեքին մի իցեն. որպէս դու Հայր յիս՝ և ես ի քեզ... Հայր արդար, աշխարհ զքեզ ոչ ծանեաւ, այլ ես զքեզ ծանեայ, և նոքա ծանեան, եթէ դու առաքեցեր զիս»։ (Յովհ. ԺԴ. ԺԵ. ԺԶ.)։

3. Էջ 23. Մուշեղ Եպսկ. կը գրէ. «Զենք գիտեր թէ Բրիստոս ի՞նչ մարմնով յարութիւն առաւ»։

Նիկիական Տիեզերական Ժողովն՝ ուսեալ ի Ս. Գրոց՝ կը պատասխանէ մեզի. «յարուցեալ, ելեալ յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր»։

Ահաւասիկ Ս. Գրոց այն վարդապետութիւնն զոր ուսան և ուսուցին մեզ Հայրապետք եկեղեցւոյ։ «Շօշափեցէք զիս և տեսէք, զի ոգի մարմին և ոսկորս ոչ ունի, որպէս զիս տեսանէք՝ զի ունիմ»։ (Ղուկաս ԻԴ. 39)։ «Ամենեցուն մեզ յանդիման լինել կայ ա-

առջի ատենին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով զոր ինչ գործեաց յառաջ, եթէ բարի և եթէ չար» : (Բ. Կորնթ. Ե. 10) : «Բե՛ր զմատուեն քո և արկ այսր և տես զձեռս իմ, և բեր զձեռն քո և մխնա՛ ի կողս իմ» : (Յովհ. Ի. 27) : «Յեսէք զձեռս իմ և զոտս իմ, զի ես նոյն եմ» : (Ղուկաս ԻԴ. 39) : «Որ զհուրք կիղևայն և զճողմով հոսեայն և զժանեօք գազանաց ծախեայն ի քթթել ական նովին նիւթականութեամբ անպակաս յարուցանես» : (Նաբեկ, բան Դ.) :

4. — էջ 25. Մուշեղ Եպ. Կ'ըսէ. «Ստոյգ է որ արեւելեան առաքելական եկեղեցիներէն մեր Ս. Եկեղեցին ալ սուրբերու մասնաւոր յարգանք կ'ընծայէ... և եկեղեցին անոնց վրայ անձնական արդիւնք չտեսներ» :

Ըսել կ'ուզէ՝ մեր Եկեղեցին սրբոց բարեխօսութիւնը չընդունիր : Այս մասին ժառանգական մէջ գրած լինելով աւելորդ կը նկատեմ կրկնել. միայն ընթերցողը կրնայ կարգալ և իմանալ. (Բարուք Դ. 4. — Յոր, ԽԲ, 8 — Ծնունդք Դ. 10 — Եբր. ԺԱ. 4 — Ա. Տիմ. Բ. 1 — Հռոմ, ԺԵ, 30. — Ա. Թեազնկ. Ե. 25 — Եզեկիէլ ԺԴ. 14 — Յոր Ե. 1 — Դանիէլ Գ. 35 — Մարկոս ԺԵ. 34 — Յովհ. Ե. 45 — Յայտն, Յովհաննու Ե. 8.) :

5. — էջ 25. «Կաթողիկ Եկեղեցին, Կ'ըսէ, կ'ընդունի թէ Ս. Կոյս Մարիամ միջնորդ եղաւ... մեր Եկեղեցին Քրիստոսի բաղդատմամբ Մարիամին երկրորդական գրեթէ աննշան տեղ մը կուտայ Քրիստոսի անտեսութեան մէջ» :

Քրիստոնէական վարդապետութեան ուսուցման մէջ այս մոլորութիւնները կարգալով, կը յիշեմ Պօղոսը որ կը զդուշացնէր մեզի. «Իցեն ոմանք որ խռովեցուցանիցեն զձեզ և կամիցին չըջել զԱւետարանն Քրիստոսի» : (Գաղատ, Գ. 13) :

Բանի՛ քանիներ այսպէս մեր մէջ կը չըջին, ոմանք նիւթապաշտական գաղափարներով, ոմանք եկեղեցական սքեմի տակ՝ իրենց կատարած ուխտին հակառակ մոլորեցնելով Քրիստոսի հօտը՝ զԱւետարանն Քրիստոսի չըջելով :

Հայ եպիսկոպոսը կը կարծէ թէ միայն զՔրիստոս բարեխօս կ'ընդունի հայ եկեղեցին : Թող լաւ կարգայ Ս. Դիրքը, միշակ մերանով չսնանի թող, հոն պիտի տեսնէ որ ոչ միայն զՅիսուս Քրիստոս միջնորդ, բարեխօս կ'ընդունինք, (Ա. Տիմոթ. Բ. 5 — Հռոմ. Ը. 34 — Ա. Յով. Բ. 1 — Եբր. Է. 28 —) այլ և զՍ. Հոգին. «Այլ ինքն Հոգին բարեխօս լինի ի հեծութիւնս անմուռնչս զի ընդ Աստուած բարեխօս է վասն օրինաց» (Հռոմ. Ը. 27), այլ և սրբոց, այլ և հրեշտակաց, զորոց խօսեցանք :

Հայ Եկեղեցին զՍ. Կոյսն Մարիամ բարեխօս կը ճանչնայ, որոյ ապացոյցն ալ տեսած է Կանայ հարսնիքին մէջ : Հոն պիտի կարգաս նաև անոնց աղօթքը որ ի կեանս են, «Իմ կամք և աղօթք առ Աստուած վասն նոցա են ի փրկութիւն» : Հռոմ. Ժ. 1 : Կը տեսնէք որ աղօթքն օգտակար է և կենդանեաց ի փրկութիւն :

Յետոյ իբրեւ Աստուածամայր սովորական սրբոց կարգէն չենք նկատեր զինքն. անոր անուամբ կոչած ենք մեր շատ եկեղեցիները, անոր անուամբ կ'երգենք ամէն օր մեր եկեղեցիներուն մէջ, և լայն տեղ մը ընծայելով Քրիստոսի Եկեղեցւոյ անտեսութեան մէջ, կը ճանչնանք զինքն «Հրեշտակ ի մարդկանէ, մարմնատեսիլ Բերովքէ, երկնաւոր արքայուհի, մայր տեառն, լեառն վիմաձին, աղբիւր յորդախատ» և այլն : Կարգացէք Ս. Աւետարանը, ժամագիրքն ու Շարականը. հոն երանութիւն, գովասանք, բարեխօսութիւն ոչ նուազ կը հանդիպին մեզ : Նոյն իսկ ինքն՝ Ս. Կոյս Մարիամ, իրեն համար խօսեցաւ այդ երանութիւնն և կտակեց զայն ապագային. «Ձի ահա յայսմ հետէ երանեացին ինձ ամենայն ազգք» : Ղուկ. Ա. 49 : «Եւ լցաւ Եղիսաբէթ հոգւով սրբով և ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Օրհնեալ ես դու ի կանայս և օրհնեալ է պտուղ որովայնի քո, և ուստի՞ է ինձ այս, զի եկեացէ Մայր տեառն իմոյ առ իս» (Ղուկաս. Ա. 39 — 43) :

Ս. Կոյս Մարիամին աննշան տեղ մը չէ տրուած. երկնային բան մը, նուիրականութիւն մը, Հոգւոյն Սրբոյ զօրութիւնը անոր մէջ բնական կայ. «Հոգին սուրբ եկեացէ ի

քեզ և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի
ի վերայ քո :»

6. Էջ 31-33 : «Հայր ընդհանրապէս կը
գործածուի, կըսէ, ստեղծող, արարիչ նշա-
նակութեամբ» : Իսկ 33 էջին մէջ կը գրէ թէ
«Հաւատոյ Հանգանակին մէջ Աստուած՝
Հայր կը կոչուի, ոչ թէ արարիչ, ոչ իբրեւ
խնամող, ոչ իբրեւ յղացող և գործադրող
տիեզերքի օրէնքներուն, ոչ իբրեւ հնարիչ
տիեզերքի կարգաւորութեան, այլ Հայր կը
կոչուի, միմիայն Քրիստոսի վերաբերմամբ
իբրեւ ծնող Քրիստոսի» : Ծապալ, սխալ և
անճիշտ բացատրութիւն :

Հայր Աստուած՝ Հայր կը կոչուի անոր
համար որ ծնող է Որդւոյն բայց չի դադրիր
լինել արարիչ երկնի և երկրի, յղացող և
գործադրող տիեզերքի օրէնքներուն, հնա-
րիչ տիեզերքի կարգադրութեան : Տարբեր
կերպով չէր կրնար ըլլալ, քանի որ Սուրբ
Գիրք՝ հռոմէոս ու նորոմէոս բարձրագոյն վկա-
ներն են, քանի որ նոյն իսկ յառաջագոյն
ի Հանգանակին ալ նոյն բանն էր ստովե-
ցուցած՝ «ի Հայրն ամենակալ յարարիչն
երկնի և երկրի, երեւելեաց և աներեւո-
թից» : որ գրեթէ ընդօրինակութիւնն է բառ
առ բառ Պօղոսի առ Կորնթացիս յղած
թղթոյն Ա. գլխուն 16 համարին : «Նովա-
հաստատեցաւ ամենայն որ ինչյերկինս և որ
ինչ յերկրի, որ երեւինն և որ ոչն երեւին» :

7. Էջ 34. Երբեք չես կրնար մտածել
թէ Հայ Եպիսկոպոս մը աշակերտաց ձեռք
տրուելիք դասագրքի մը մէջ գրէ թէ Ս.
Գրքին մէջ երբեք երրորդութիւն բառը
գոյութիւն չունի, Քրիստոս և Առաքեալք
բաւականացան Հայր, Որդի և Հոգի յոր-
ջորջումով միայն, հետեւաբար այդ բառե-
րուն կը հանգիպինք միայն Նոր Կտակարա-
նին մէջ :

Մուշեղ Եպիսկ. կը մոռնայ թէ հինը
ստուերն է նորին, և նորը լրումն է հնոյն.
ուստի սխալ է երբ կ'ըսէ թէ Հայր և Որդի
և Հոգի հնոյն մէջ չկայ : Մենք բառերուն
պէտք չէ նայինք այլ ընդհանուր գաղա-
փարին, ինչպէս կ'ըսէ ինքը քանի մը տող
վերջը : Հրէից մէջ Մեսիային՝ Փրկչին, օծ-
եալին՝ ծագումին՝ Որդւոյն գալուստը խոր
արմատ ձգած էր երկար դարերէ ի վեր, և

կը սպասէին անոր որ պիտի փրկէր մարդ-
կութիւնը : Տիտոս Հռոմէացին կը վկայէ
թէ քրմաց հին ըսածին նայելով, (կը տես-
նէ՞ք, Հրեայներէն անցած էր այդ խոստումը
հեթանոսաց) Հրէաստանէն մէկը պիտի ելլէ
և աշխարհի պիտի տիրէ. զի «նա է ակրն-
կալութիւն հեթանոսաց» (Մտունդք ԽԹ.
10) :

Երբ Յովհաննէս երեւցաւ, ժողովուրդն
անոր քարոզութիւնը, մկրտութիւնը լսե-
լով կը կարծէին թէ նա էր Քրիստոսը :
«Մինչ ակն ունէր ժողովուրդն և խորհէին
ամենեւեան ի սիրտս իւրեանց վասն Յով-
հաննու միթէ սա՞ իցէ Քրիստոսն» : (Ղու-
Գ. 15) : Եթէ Քրիստոսը չես, ինչո՞ւ մկր-
տութիւն կ'ընես, կը հարցնէին : Յովհաննէս
կը պատասխանէր. «Իմ ետեւէս եկողն է
Քրիստոսը, ես անապատին ձայնն եմ» :

Հին Կտակին մէջ յիշուած ծագում, օծ-
եալ, Փրկիչ ի մարգարէից գործածուած
բառերուն տեղ, Քրիստոսի ժամանակակից
Հրէից մէջ կը գործածուէր Քրիստոս, որ է
Օծեալ, Այս բառերէն զատ գործածուած են
նաեւ Աստուած, Տէր բառերն Որդւոյն նկատ-
մամբ : Ըստ Մուշեղ Եպիսկոպոսի, մարգարէք
Քրիստոսի վրայ կատարած մարգարէու-
թեանց միջոցին խորհած անգամ չունէին
երրորդութեան վարդապետութեան վրայ,
որ անձանօթ էր Հրէից :

Մարգարէք կը գրէին. «Ոչ եթէ ըստ
կամաց մարդկան... այլ ի Հոգւոյն Սրբոյ
կրեալք» : (Բ. Պետ. Ա. 21) և Առաքեալք կը
խօսէին. «Զի Աւետարանն ոչ եղև առ ձեզ
միայն բանիւ, այլ և զօրութեամբ և Հոգ-
ւով Սրբով» : (Ա. Թեսալ. Գ. 8) :

Երրորդութեան երեք անձինքն ծանօթ
էին մարգարէից ի Հոգւոյն Սրբոյ կրեալք,
և այդ ծանօթ գաղափարը ստուերն էր
երրորդութեան ճշմարտութեան. «Զի
զստուերն հանդերձելոց բարեացն ունէին
օրէնքն, և ոչ զնոյն կերպարան լրացն» :
(Եբրաց. Ժ. 1) :

Փրկչին գալստեան գաղափարն այնքան
հաստատուն էր Հրէից մէջ, որ զԹիսուս
տեսնելով, հետեւելով և աշակերտելով
անոր, հաւատալով անոր փրկագործութեան
և Աստուածութեան, զեռ վարանողներ

եղան, որպէս զի չըլլայ թէ խարուած ըլլան և խոստացեալ Փրկիչը չըլլայ ան: Ասոնցմէ էր Մարիամ Կղէնպաս որ Եմմաուտսի ճամբուն վրայ յետ Յարութեան կը պատահի Յիսուսի, առանց ճանաչելու զինքն և անոր հարցման կը պատասխանէ. «Մեք ակն ունէաք թէ նա է որ փրկելոցն է զԻսրայէլ, այլ և հանդերձ այսու ամենայնիւ այս երրորդ օր է, յորմէ հետէ այն գործեցաւ:» Դուկաս ԻԴ. 21:

Բրիստոս իր քարոզութեանց մէջ և Առաքեալք իրենց գործերուն մէջ ի հաստատութիւն նորին՝ հինէն վկայութիւններ կը բերէին. ուր որոշապէս կը տեսնուէին Հայր, Որդի, Հոգի գաղափարները, վկայութիւններ որ կը համաձայնէին կատարուած իրողութեան քսելով զի լցցի գիրն: Յետոյ հին ուխտի Ս. Գիրքը նորին դաստիարակն եղաւ. «Ապաքէն օրէնքն դաստիարակք եղեն մեզ ի Բրիստոս Յիսուս, զի ի հաւատոցն արդարացուք, այլ իբրեւ եկին հաւատքն, ոչ եւս ընդ գաստիարակաւ եմք.» (Գաղտ. Գ. 24):

Սուրբն Օգոստինոս ալ ուրիշ բացատրութիւն մը կուտայ հնոյն և նորին համար, նորը հինին մէջ ծածկուած, հինը նորին մէջ բացատրուած:

Հիմա պէտք է յիշել աստուծոյ այն վկայութիւնները, որ կը հային Հօր, Որդւոյ և Ս. Հոգւոյ գաղափարին, յայտնուած ի հնումն: «Նա զմեզս մեր բառնայ և վասն մեր չարչարի և նորա վիրօքն բժշկեցաք»: (Նսայի ԾԴ. 1—5): «Եւ հանգիցէ ի վերայ նորա Հոգի Աստուծոյ»: (Նսայի ԺԱ. 1—10) «Ահա թագաւոր քո գայ առ քեզ, արդարեւ փրկիչ, նոյն հեզ՝ և հեծեալ ի վերայ իշոյ և յաւանակի նորոյ»: (Չաքար, Թ. 9) «Ահա ապիկ Աստուած մեր հատուցանէ դատապատան, և հատուցէ: Ինքնին եկեացէ և փրկեացէ զմեզ, յայնժամ աչք կուրաց քացցին և ականջք խլից լուիցին»: Նսայի ԼԵ. 4—6: «Ահա ես առաքեմ առ ձեզ զՅովիա Թեղբայր, մինչչեւ եկեալ է օր Տեառն մեծի և երեւելոյ»: Մաղաք Դ. 1—6: «Պատրաստ արարէք զճանապարհ Տեառն և ուղիղ արարէք զչաւիղս Աստուծոյ մերոյ»: (Նսայի Խ. 3):

«Զի մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ, որոյ իշխանութիւն իւր ի վերայ ուսոց իւրոց, և անուն կոչեցաւ նմա հրեշտակ մեծի խորհրդոյ, սքանչելի խորհրդակից, Աստուած հօգօր, իշխան խաղաղութեան, Հայր հանդերձելոյ աշխարհին»: (Նսայի Թ. 6) «Ահա այր, և Ծագունն անուն նորա և եղիցի քահանայ ընդ աշմէ նորա»: (Չաքարիա Զ. 12): «Եկեացէ ի Սիոնէ փրկիչ, եւ այս նոցա որ յինէն ուխտ, ասէ Տէր»: (Նսայի ԾԹ. 20): «Ընդէ՞ր խոովեցան Հիստոսք... վասն Տեառն և վասն օծելոյ նորա»: (Սաղմ. Բ. 1—4): Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ եւ ոչ ստեաց նմա». (Սաղմ. ԶԼԱ. 11): «Ո՛չ գիրք ասեն եթէ ի զաւակէ Դաւթի... գալոց է Բրիստոսն»: (Յովհ. Է. 42): «Ահա կոյս յղասցի և ծնցի որդի և կոչեցեն զանուն նորա Էմմանուէլ»: (Նսայի Է. 14): «Ծնցի որդի և կոչեցեն զանուն նորա Յիսուս, (որ է Փրկիչ) զի նա փրկեացէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց»: (Մատթ. Ա. 21): «Ողորմութեամբ Տեառն (Հայր) լի եղեւ հրկիր, և բանիւ (Որդին) Տեառն երկինք հաստատեցան եւ հոգւով (Ս. Հոգին) բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նորա»: (Սաղմ. ԼԲ. 6): «Առաջուր մարդ բատ պատկերի մերում և ըստ նմանութեան... Եկայք իջցուք և խառնակեցուք անդ զլեզուս նոցա»: (Ծնունդք Ա. 26—ԺԱ. 7): «Ասէ ցնա Տէր... փրկեցից զնոսա ի Տէր Աստուած նոցա»: (Չաքարիա Ժ. 3) «Տէր Տէր առաքեաց զիս և Հոգի նորա»: (Նսայի ԽԼ. 6): «Ո՛վ կալաւ զձաքս երկրի, զինչ է անուն նորա, կամ զինչ անուն Որդւոյ նորա»: (Առակք. Լ. 4):

Այս վկայութիւնները չեն հաստատեր Աստուածային երեք անձնաւորութեան գաղափարը Հին Օրինաց մէջ:

ՀՄԱՅԵԱԿ ԲԶՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ԵԿԵՂԵՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՐԱՅՈՒՄԸ

Եկեղեց. Բարեկարգութեանց ամենեւնեւ Կաթողիկոսականութեան Բարեկարգութեան եւ իր հոգեւորական աստիճանին արժանաւոր դիրքի մը հասցունելուն նկատմամբ առաւել քան օսանեալ մը առաջարկներ եւ թելադրութիւններ հասած են Խմբագրութեան: Առնց յոյսի ալ հրատարակութեան անբաւական են Տաճարի անձուկ Կիւրը: Կը հրատարակենք անոնցմէ երկուքը, առաջինը Երզնկայի Կրօնական Ժողովի եւ երկրորդը Հայկաթի քանիւնց քահանայ մը, յանձնելով հոգեւորական թէ աշխարհական ընթերցողներուն մասնաւոր ուշադրութեան: Երզնկայի Կրօն. Ժողովոյ անդամ՝ գնահատելի եմք Եկեղեց. Բարեկարգութեանց համար եղած առաջարկութիւնը, իրենք եւս կ'առաջարկեն.—

Ա. — Միանգամ ընդ միշտ մաքրագործութիւնը սիմոնիական եւ կեղծաւոր կղերականութեն. ըլլան վարդապետ կամ քահանայ, որոնց թիւը օրրստօրէ բաղմապատկուիլ սկսած է, մանաւանդ գաւառներու մէջ:

Այսպիսիներ 5—10 զրէ. չնչին գումարի մը համար կը ստորնացնեն քահանայական արժանապատուութիւնը, կոխտուելով առաքելական կանոնները եւ առումախի վերածելով իրենց Ս. պաշտօնը, զոր այնքան խոստումներով եւ երդումներով ընդունած են սիրայօժար: Դանի մը այդ կարգի ուխտագրութիւնը պատճառով հերիք է կարծենք ամբողջ կղերականներու հասցէին ուղղուած անարգական խօսքերը (սեւացրեցիները) որոնք՝ սուր սլաքներէ, շատ աւելի կը խոցեն սիրտերը ամէն անոնց որ գիտեն թէ ի՞նչ է արժանապատուութիւնը: Այդ տեսակ զօշաքաղներու մասին տնօրինուած պատիժները, այնինքն ստգտանք, փիլոնապրկութիւն են. , ո՛ր եւ է ազդեցութիւն չեն ընել եւ չպիտի ընեն, քանի որ այդ վատթար սկզբունքներով աներ եւ մեծքեր են: Անոնց մաքրագործութիւնը համար միակ եւ կտրուկ միջոցն է հրաշափառ կարգաւորութիւնը, հոգ չէ՛ թէ մէկ քանիներ ուրանալու աստիճան ստորնանան. աւելի լաւ է քանի մը կղերներ զոհել, ամբողջ կղերականութեան առումը մաքրելու համար:

Բ. — Քահանայից նիւթականին մասին տնօրինուած մուրալիկ ձեւերը բարեփոխելով՝ պատուարներ եւ գոհացուցիչ դիրքի մը վերածել տեղւոյն եւ ժամանակին պահանջութիւն համաձայն. որովհետեւ կարգ մը քահանաներու կողմէ գործուած զեղծութիւններու բուն պատճառը նիւթականի անձկութիւնն ըլլալը շատ փորձերով ապացուցուած է:

Գ. — Առանց Պատրիարքարանի արտօնութեան թափառաշրջիկ քահանաներու պաշտօն չտալ թէ, կեդրոնի եւ թէ գաւառի մէջ:

Դ. — Ստիւ արգիլել կարգ մը քահանաներու ըրած աւելորդ ձեւակերպութիւնները՝ Մկրտութեան, Պսակի, մեռելաթաղի եւ Ս. Պատարագի արարողութեանց պահուն, որոնք կը կատարուին ըստ իւրեանց քմահաճոյից՝ լո՛կ ցուցականութեան համար:

Ե. — Յիշելով Ս. Աւետարանի խօսքերը «Տուն իմ տուն աղօթից կոչեսցի» (Մտթ. ԻՍ., 13), եկեղեցիներու մէջ արարողութեանց պահուն գանձանակի եւ պնակներու չըջաբերութիւնը վերցնելով՝ անոնց փոխարէն հասոյթի սարքեր աղբիւրներ գոյացնել:

Զ. — Այրիացեալ քահանաներու վերամոնսնութեան համար բաւական խնդիր դարձաւ ժամանակին: Ըսուեցաւ թէ «Երիտասարդ այրիներ թող վանքը քաշուին. իսկ ծերերը մնան իրենց պաշտօնին մէջ» բայց նկատի առնուեցան անոնց անշափահաս զաւակները՝ որոնք խեղճ քահանային վրայ բեռ մը կ'ըլլան: Դիցուք թէ այրի քահանաներու վերամոնսնութիւնը ապօրինի է, խեղճ երիցուններուն ինչ պատճառ կայ ցմահ այրի մնալու եւ տեսակ տեսակ րամբասանաց առարկայ դառնալու. կարգ, օժուր ունին: Կարծենք ո՛չ:

Է. — Ժամանակի պահանջութիւնը համաձայն, ճիւղահամարի յատուկ կանոնադիր մի պատրաստել, վերջ տալու համար ժողովրդեան կողմէ եղած անմարսելի դիմողութիւններուն:

Ը. — Առաջնորդ, տեղապահ եւ փոխաւոր Ս. Հայրերու յանձնարարել, որպէսզի եկեղեցիի արարողութիւններու ատեն իրենց

աթոռին վրայէն կամ նոյն իսկ պատարագած միջոցին չպօռան շարժուածներով, նախատինք ու սպառնալիքներով, ինչ որ չի վայել արքայալոյսի մը մէջ: Եթէ թերացողները պատժել, յանդիմանել հարկ է, կրնան յաւարտ եկեղեցւոյ պարտ ու պատշաճը տնօրինել:

Թ. — Թողունք եպիսկոպոսութիւնը, նոյն իսկ ծայրագունութեան աստիճանը չունեցող Առաջն. տեղապահներ պատարագելու համար կը զգեստաւորին թաղ. խորհրդարանին մէջ: Երաժշտաց խումբը ըուրվառներով, քոյցներով ու մամուղէներով ստիպուած են դիմաւորելու, «Հրաշափառ Աստուած», «Այսօր քահանայապետ աստուածային» շարականները երգելով, կարծես Ս. Հայրապետը եւ կամ Ս. Պատրիարքն է որ կը պատարագէ: Առ նուազն մէկ քառորդ ժամ ժողովուրդը եկեղեցին պարապ մնալէն ձանձրացած, կը ստիպուի դուրս ելնել. խառնաշփոթութիւն եւ իրարանցում անպակաս կ'ըլլան միշտ: Ինչ հարկ այսչափ փառասիրութեան, քանի որ մեր երկնաւոր վարդապետը կը սովորեցնէ. «Ուսարուք յինչն զի ես հեղ եմ եւ խոնարհ սրտիւ» Արդեօք այդ արդուզարդերը Յիսուսի ուսին վրայի խաչափայտը, տէգները, սուրբերը, բիրները կը խորհրդանշեն, մինչ կը բարձրանար նա Գողգոթայի կատարը՝ թափելու համար իւր Ս. Արիւնը մեղաւոր եւ ապերախ մարդոց փրկութեանը համար:

Ատենապետ՝ Ներսէս վրդ. Մկրտիչեան
Ատենաղայր՝ Դեռնդ ֆինյ, Փոչիճեան
Անդամք՝ Խորէն ֆինյ, Գալեօնճեան,
Գրիգոր ֆինյ, Սեփեքճեան

ԱՆՇՐԱԺԵՇՏԸ

Ի մօտոյ ի նիստ գումարելի Համագումարին կողմանէ բարեփոխելի կամ նոր հաստատութիւնք եկեղեցական կամ կրօնավարական օրէնքները իրենց նպատակին խոտոր համեմատող արդիւնք պիտի աքտադրեն, քանի որ այդ օրէնքները գործադրող, կամ լաւ եւս է ըսել, այդ օրէնքներուն իսկական նպատակին թափանցող

պաշտօնականներ չունինք. մանաւանդ ամուսնացեալ կղերիս օր քան զօր անկման վիճակի մէջ է: Ինչ իրաւունք ունի ազգը արդիւնք սպասելու մեզի պէս անճարակ, սգէտ քահանաներէն, երբ անոնք Տեմիւրճի պօզմախէ, լուսարարի եւամախէ, ազգի անկարեա կամ, առ առաւելն, ծաղկոցի օգնական դասատուներէ ընտրուած խեղճ ու կրակ արարածներ են... Բայց ո՞վ է ընտրողը եւ ովքեր են աւելի: Հակակողեր պայքար մղողներ: Ահա հոս է խոտորակ համեմատութիւնը: Ես իբր Հայ Եկեղեցւոյ անարժան քահանայ, իմ անձնական փորձառութեամբս, կարեւորագոյն կը նկատեմ նախ կարող եւ իր կոչումին իսկապէս զիտակ պաշտօնականներ ունենալ, յարգելով ժամանակի պահանջը՝ գծելի օրէնքներու գերագոյն նպատակին համապատասխան սահմանի մէջ: Ուստի հետեւեալները կ'առաջարկեմ:

Ա. Անհրաժեշտ պէտք է համարուի քահանայացւոյն՝ ի ձեռին ունենալ վիճակին Գաւառ. Ընդհ. Ժողովոյ վկայագիրը:

Բ. Առանց Գաւառական Վարչութեան կրօն. Ժողովոյ առջեւ քննութեամբ արժանաւորութիւն ցոյց տալու, ո՞չ ոք քահանայ չձեռնադրեն:

Գ. — Տարեկան 200 լիրա պիւտժէ ունեցող եկեղեցիներ պէտք է որոշ տարեթոյսներ յատկացնեն քահանայից, ըստ արժանեաց իւրաքանչիւրին:

Դ. — Քահանայից տարեկան իրաւունքի հասոյթէն հարիւրին 3 կամ 5 զեղչելով հանդստեան անտուկ մը հաստատել յանուն քահանայից:

Ե. — Խեղացեալ կամ ծերութեան պատճառաւ անկարողութեան ենթարկեալ քահանայից ապրուստը ապահովել, մաս մը հանգստեան անտուկէն եւ մաս մըն ալ Տընտեսականի պիւտժէէն:

Զ. — Քանի որ այրիացեալ քահանայից վերամուսնութիւնը արածող օրէնք մը ձեռք բերել ներկայիս մէջ դժուար պիտի լինի, հետեւաբար բանաւոր է առաջարկել թէ՛ երբ այրիացեալ քահանան հոգեւոր իշխանութեան կողմանէ արգիլուի քահանայագործելէ, կամ եթէ վարդապետա-

նախու կոչուի, պէտք է այդ քահանային զաւակաց բարոյական և նիւթական պիւտոյից գոհացում տալու միջոցներ հայթայթել:

Է.—Այրիացեալ երիցունեաց վերամուսուլիւնը անպայման կերպով պէտք է արտօնուի, կամ անոր զաւակաց ապրուստը ապահովուի:

Ը.—Տարեկան 300 լիրա պիւտճէ ունեցող եկեղեցիներ, քահանայական դասուն զարգացողական միջոցներուն ի դիւրութիւն, պէտք է որոշ գումար մը (տարեկան) յատկացնեն, վիճակին առաջնորդին որոշմամբ:

Թ.—Ազգ. Երկ. Վարժարանաց մէջ կրօն. դասախօսութիւնք տեղւոյն կրօն. ժողովոյ անմիջական իրաւասութեան տակ պէտք է լինին: Քաղաքներու մէջ կրօն. ժողովոյ որոշմամբ միայն յանձնել այդ դաստանդութիւնը. իսկ գիւղերու մէջ, եթէ այդ պէտքը գոհացնող քահանայ չգտնուի, աշխարհական ուսուցիչներու կը յանձնուին դասերը, պայմանաւ որ, տարին երկու անգամ վիճակին առաջնորդին կողմանէ զրկուած հմուտ քահանայի մը միջոցաւ քննուի յիշեալ դաստանդութեանց մեթոտն ու արդիւնքը:

Ժ.—Առանց ընծայարանի, քահանայական այն անկիւսով վիճակը զարմանել բացարձակապէս անկարելի է. դէթ ներկայիս մէջ կիլիկիոյ Մայրավանքը, Այրմաշն ու Ս. Կարապետի վանքը կրնայ բաւարարութիւն տալ, եթէ այդ նպատակաւ որոշ և տեւական պայմաններով գործի սկսուի:

Հայեպ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԶ. ԵՍԱՅԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ անորոշ կը մնայ տակաւին: Ազգ. ժողովը թէև անցեալ շաբթու գումարուեցաւ, բայց Վարչութեան հրաժարականին ընդունուելուն թիւ ու դէժ վիճարանութիւնները շարունակուեցան միայն, առանց ելքի մը յանգելու:

Այս շաբթուան համար Ազգ. ժողովը նիստի հրաւիրուած է նոյն օրակարգով. բայց յուսալի է որ այս անգամ ելքի մը յանգի, քանի որ «Ազատական» և «Կեդրոնի» խմբակցութեանց միջև՝ գոնէ ներկայ վարչական, տագնապի լուծման համար համաձայնութիւն գոյացած ըլլալը կը գրեն թերթերը, այն հիման վրայ որ թէ՛ Ս. Պատրիարքին և թէ՛ Վարչութեան հրաժարականներն ընդունուին: Խօսք կար Պատր. Տեղապահութեան կոչելու Պրուսայի Առաջնորդ Արշարունի Տ. Յովհաննէս Ս. Արքեպիս. ը, Պատրիարքութեան ընտրելի հրաշակելու Գաղատիոյ Առաջնորդ նորապսակ Տ. Բարգէշ եպիսկ. Կիւլէսէրեանը: Ամէն պարագայի մէջ, յուսանք որ այս տուրքն հրատարակուելու պահուն օրաթերթերը ծանուցած ըլլան Ազգ. ժողովի վերջնական որոշումը, թէ՛ պատրիարքական և թէ՛ վարչական տագնապի լուծման համար:

Որոշուել է նաև որ ոստիկան բերուի այն պարագային երբ երեսփոխաններ ա. նարգանքի ենթարկուին: Յուսանք թէ ամէն զաւակարգի ազգայիններ վերջապէս հասկնալով Ազգ. իշխանութեան հեղինակութեան պատկառ կենալու անհրաժեշտութիւնը, ոստիկան հրաւիրելու հարկին մէջ չեն դնիր մայր դիւանը...:

* * * Խառն ժողովը և յետոյ Գաղաքական ժողովը Դշ. օրը նիստ գումարելով, զբաղեցան ընթացիկ գործերով: Ի մասնաւորի Պայագիտի հեռագրին առթիւ — որոյ վրայ կը խօսինք քիչ մը վարը — որոշուեցաւ ցրել Առաջն. փոխանորդին որպէս զի իրաց վիճակը անփոփոխ պահէ, մինչև նորընտիր Առաջն. տեղապահ Տ. Վահան Մ. Վ. Յակոբեանի ժամանումը:

ԿՈՒՍՍԱԿՑԱԿԱՆ տխուր գործունէութեան լուր մը կուգայ Պայագիտէն, նոր ապացոյց մը աւելցնելով Տ. քթ. Սեղբոսեանի ծանօթ յիշատակագրին: Առաջն. փոխանորդը կը հեռագրէ թէ «Իւլ Բիլիսէի վանքին հաշիւները կարգադրելու թշնամական նպատակով, Դաշնակցութիւնը վանքին մասնաւոր իրաւունքներն իր պաշտպանութեան տակ առնել կ'ուզէ, և կրճեական գործերու իրաւասութեան կը մի-

ջամտէ» : Սխալ հասկացողութեամբ մը նախ լուր տրուած էր Պատրիարքարանէն թէ Պայազիտի առաջնորդարանը Դաշնակցականներ գալով պաշտօնեաները դուրս հաներ են, բայց յետոյ ճշգրտեցաւ Իւշ Բիլիսէի վանքին համար ըլլալը : Իրողութիւնն այն է թէ ոսնձգութիւն մը կայ միշտ : Առաջն. փոխանորդը կ'աւելցնէ թէ խնդիրն եթէ այսպէս շարունակէ, պիտի պարտաւորուի հրաժարիլ :

ԵԳԻՊՏՈՍԻ բարեգործական Միութիւնը նոր ապացոյց մը կուտայ իր շինարար գործունէութեան, տարեկան 300 Անգլ. ոսկի տրամադրելով Միացեալ Ընկերութեան, 20 գիւղական վարժարաններ բանալու համար, 16ը Սղերդի և Սլիվանի կողմերը, իսկ 4ը Կիլիկիա : Միութիւնը կարօտեալներու և աղետալներու օգնելէ քիչ մը չունչ առած, սկսած է կրթական կարեւոր ձեռնարկներ հովանաւորել : Որոշուել է զորակել նաև 50 ոսկի՝ Վանայ Կիզը. վարժարանին, 80 ոսկի Սասունի կարօտ հողագործներուն՝ եղի համար, 70 ոսկի Տալուրիկի կարօտ երկաթագործներուն՝ հողագործական գործիքներու և հնոցի համար, և 60 ոսկի Կիլիկիոյ Նաճարի գիւղի կարօտ հողագործներուն՝ եղի համար :

ՏՓՂԻՍԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. Գարեգին Արքեպ. Սալուսեանցի մահը գուժուեցաւ շարժում, Գաղատիոյ Առաջնորդ Տ. Բաբգէն եպ. ի մէկ հեռագրով ի Պատրիարքարան : Հանգուցեալ արքայանք ընել Աշտարակեցի էր, իբր 60 տարեկան, հոգեւոյս Տ. Գէորգ Դ. Ս. Կաթողիկոսի օրով էջմիածին գացած և հին ժառանգաւորաց վարժարանին մէջ ուսումն առնելով վարձապետ ձեռնադրուած : Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ հոգեւոյս Խրիմեան Հայրիկէն : Երկար տարիներէ ի վեր կը վարէր Տփղիսի առաջնորդութիւնը, որ Ռուսահայոց ամէնէն կարեւոր առաջնորդութիւնն է : Հանգուցեալը բաւական ուսման տէր և կարող եկեղեցական մըն էր Ռուսահայոց մէջ : Կ. Պոլսեցիները ճանչցան զինքը, երբ վերջին անգամ իբրև հրաւիրակ եկաւ Ամնայն Հայոց Հայրապետ՝ Վեհ. Տ. Տ. Մատթէոս Բ. Ս. Կաթողիկոսին :

ԲԱՐԵՍԷՐ Պ. Աղեքսանդր Մանթաշեան 2000 թըլ. նուիրէր է ձրի և աժանագին ճաշարաններու Տփղիսի ընկերութեան : Տփղիսի առաջնորդարանին ալ նուիրեր է փառաւոր կառք մը :

ԸՄԲՈՍՏՈՒԹԵԱՆ ցաւալի դէպք մը պատահեցաւ անցեալ շաբթու Կարապետեան Վարժարանին մէջ : Նորամուտ մէկ երկու աշակերտներ, դժգոհ մնալով աշակերտական Միութիւն մը կազմելու արգելքէն, — որ յառաջ եկած էր այդ Միութեան՝ իր իրաւասութենէն չափ վեր խնդիրներու միջամուխ ըլլալէն — կը յարձակին դաստիարակ-ուսուցիչ Սալիկ էֆ. Ինկիլիզեանի վրայ, որ յժուարաւ կը յաջողի աղատել օձիքը, և յուզուած այս տխուր դէպքէն, անմիջապէս հրաժարականը կը գրէ տնօրէն Պ. Կարապետեան էֆ. ի, խնդիրը պարզելով մանրամասնօրէն : Տնօրէնը յանկարծակիի եկած՝ անմիջապէս վարժարան գալով, անպայման կը վտարէ երկու ըմբոստ տղաքը, իսկ անոնց համախոհ երկու տղաք ալ միամսեայ արտաքսման կը դատապարտէ : Կարապետեան էֆ. ի կտրուկ ընթացքը գոհունակութիւն պատճառած է լուրջ շրջանակներու և բազմաթիւ ծնողներու, որ կ'ուզեն իրենց զաւակները տեսնել ճշմարիտ զարգացման ճամբուն վրայ, և ոչ թէ կանխահա «գիտակից հերոս»ներ : Ծիշտումնօրինակ կրտուկ ընթացք մը թռնած էր Պարտիզակի բարձր. վարժարանին տնօրէն Վեր. Տքը, Չէնպրոս, անցեալ տարի պատահած աշակերտական ըմբոստութեան մը առթիւ, ինչպէս կը պատմէր Զիֆիլէ-Սարաֆ, և այդ կտրուկ ընթացքն իսկ առիթ եղած է վարժարանին առաւել փայլուն վիճակ մը ստանալուն : Նոյնը կը մաղթենք Կարապետեան վարժարանին :

ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ. ի բանախօսութիւնը՝ եկեղեց. երաժշտութեան վրայ՝ դժբախտաբար տեղի չունեցաւ անցեալ շաբթու, Ղալաթիոյ Խորհրդարանը տրամադրելի ընելու մասին ծագած թիւրիմացութեան մը հետեւանօք :

ԱՐՏՈՆԱՏԷՐ

ՀՄԱՅՆԱԿ ԳԶՆԵ. ԷՐԱՅԻՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԶԱՐԲԱՅՐ ԳԶՆԵ. ԿԷՋԻՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

Զախմախմախ Թախմախ խախ

ՍՏԱՅՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆԻՒ ԱԻԵՐԱԿ-
ՆԵՐՈՒՆ, գրեց Գրիգորիս Ծ. Վ. Պալագ-
եան: Բազրատունեաց հռչակաւոր մայրա-
քաղաքը, որ դարաւոր և անհերքելի վկան
է Հայուն անցեալ փառաւոր քաղաքակը-
թութեան, տեղւոյն վրայ ուսումնասիրու-
թեամբ և նշանաւոր գիտնականներու գոր-
ծերուն հետեւողութեամբ նկարագրուած է
այս գործին մէջ՝ պատմական, տեղագրա-
կան, գիտական ևն. տեսակէտներով: Ըն-
տիր թուղթի վրայ, չքեղ տպագրութեամբ
հրատարակուած, և ձօնուած է Վեհ. Տ.
Տ. Մատթէոս Բ. Ս. Կաթողիկոսին, Որան
և Անիի աւերակներու 34 պատկերներով
զարդարուած է: Գին 7 1/2 ղրշ.:

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻ, գրեց Մա-
միկոն Վարժապետեան: Հեղինակը կը խօսի
այն բարեփոխումներուն վրայ որոնց կը
կարօտի, իր կարծեօք, Հայ Եկեղեցին:
Մնամով պատրաստուած գործ մը, թէ և
իր յանդուգն կարծիքներէն ոմանց համա-
միտ չ'ըլլանք: Տպ. Մարզուան, Ներսօ և
Սրապեան: Գին 2 ղրշ.:

ՅԻՇՍԱԿԱՐԱՆ, հրատարակութիւն
Ջորճարեան եղբարց: Հրատարակուեցաւ
Բ. հատորին Գ. թիւը, շահեկան բովան-
դակութեամբ: Գին 2 ղրշ.:

ՓԱՐՈՍ, ամսաթերթ. հրատարակուե-
ցաւ հոկտ. թիւը, շահեկան բովանդա-
կութեամբ, այս անգամ խմբագրապետու-
թեամբ Գր. Մխալեան էֆ. ի, նախորդ խմբ-
ագրապետը՝ Յ. Ալոճեան էֆ. Լոնտոն
մեկնած ըլլալով: Տարեկան բաժնեգին 15
ղրշ., 4 ֆր. կամ 1 տոլար:

ՀՄԱՅԵԱԿ ՔԱՀԱՆԱՅ ԷՔՍԷՐՃԵԱՆ
ՏԱՐԵՐԻ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ

Ա. Բ. Գ. հատոր

30 զեղչ

Կեդրոնատեղի՝ Սիւմպիւլիւ խան Փափագ-
եան գրատուն:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ

ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ

ԱՆԳԼԻԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ

Զ. Տ. Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

1136 Ութածալ էջ.— Websterի հրատա-
րակիչներէն առնուած 800 գեղեցիկ
պատկերներով

Եղական աշխատութիւն. գնահատուած
Հայ և օտար բազմաթիւ անձնաւորու-
թիւններէ: Անգլիերէն Հոմանիշներ բառե-
րու տակերը դրուած յար և նման Webs-
terի: Մասնաւոր Յաւելուած մը Անգլիա-
կան և Ամերիկեան բազմաթիւ ոճերու և
և ասացուածներու օրինակներով բացատ-
րուած: Մասնաւոր Յաւելուած մը Անգ-
լիական նոր ուղղագրութեան բարեհաճ
արտօնութեամբ, Simplified Spelling
Boardի:

Անկլօ-Հայ Փափագեան բառարանը՝
արդիւնք երկարամեայ ուսումնասիրու-
թեան և տաժանելի աշխատութեան, պատ-
րաստուած է մեծ խնամքով և զլխաւոր
հետեւողութեամբ Websterի և Cassellի
վերջին բառագրոց և նիւթական ու բա-
րոյական ու է զոհողութիւն չէ խնայուած՝
Ամենակատարեալը, Ամենալստահելին և
Անմրցելի ընելու համար:

Անկլօ-Հայ Փափագեան բառարանը կը
ծախուի մասնաւորապէս պատրաստուած
տուփերու մէջ ի գին անգլիական լաթա-
կազմը 70 իսկ կիսակաշին 75 դահեկանի,
փօսթի ծախքով 75 և 80 դահեկանի: Ամե-
րիկայի համար 3 տոլար և 3.20ի, իսկ Եւ-
րոպայի համար 16 և 17 ֆրանքի: Փո-
խարժէքը զրկել չէքով կամ մանտարոս-
թով ուղղակի հեղինակին, առանց երրորդի
մը, յապաղմանց և այլ անպատեհութեանց
տեղի չտրուելու համար:

Հասցէ,

Z. D. S. PAPAZIAN,
Bible House

Constantinople, (Turkey)

